

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Անցումային երկրների տնտեսությունների վերականգնումն առկա կառուցվածքային անհամահասնությունների հաղթահարումն ու սոցիալական համակարգերի արդյունավետ զարգացումը հիմնականում պայմանավորված է վճարային հաշվեկշռի բարելավմամբ, արտադրական ներուժի ընդլայնմամբ և տնտեսական կայուն ու տևական աճի ապահովմամբ: Տնտեսության իրական հատվածը և ֆինանսական հոսքերը նկարագրող մակրոցուցանիշները փոխազդում են մեկը մյուսի հետ և, ըստ էության, ներկայացնում մեկ միասնական համակարգ: Այս համակարգում կարևոր նշանակություն ունի դրամավարկային քաղաքականության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը և իրագործումը: ՀՀ-ում հատկապես անցումային շրջանի վերջին տարիների ընթացքում դրամավարկային քաղաքականության կարգավորման միջոցով հնարավոր դարձավ նվազեցնել ինֆլյացիան, ընդլայնել վարկային ներդրումներն ու խնայողությունները, որոնք ներդրումների արդյունավետության բարձրացման և տնտեսական աճի համար դարձան հիմնական գործոններ:

Դրամավարկային քաղաքականությունը, որն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ), իրենից ներկայացնում է փոխկապակցված միջոցառումների մի ամբողջություն, որը կարգավորում է գործարար ակտիվությունը՝ վարկի վիճակի և փողի շրջանառության վրա ազդելու միջոցով: Այն, ինչպես ֆիսկալ քաղաքականությունը, պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ուղղված է ինֆլյացիայի դեմ միջոցառումների մշակման, ազգային արժույթի կայուն փոխարժեքի պահպանման և շուկայական տնտեսության սահուն գործունակության համար բարենպաստ ֆինանսական պայմանների ստեղծմանը: Կարելի է ասել, որ դրամավարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման կարևորագույն բաղադրատարրերից է, և դրա արդյունավետությունը որոշիչ է տնտեսության կայուն զարգացման գործում: Այսպես, 2004թ.-ից սկսած ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում պահպանում է կարևոր նշանակություն ունեցող փոխարժեքի ազատ լողացող ռեժիմը և գների ապահովմանն ուղղված ռազմավարությունը¹:

Բացի վերոգրյալից սահմանվեց նաև ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը, այն է՝ գների կայունության ապահովումը, որը 2005 թ. տեղի ունեցած համապատասխան փոփոխություններով բարձրացվեց մինչև սահմանադրական մակարդակ²: Այնուհետ 2006թ.-ից մինչ օրս դրամավարկային քաղաքականության զարգացման առումով այլընտրանք կարող էին ծառայել կա՛մ փոխարժեքի, կա՛մ գնաճի նպատակադրման ռազմավարությունները: Մակայն հետագա գործընթացները վկայեցին այն մասին, որ անցումը փոխարժեքի նպատակադրման ռազմավարությանը Հայաստանում աննպատակահարմար էր՝ պայմանավորված հետևյալ գործոններով³.

1. Անկախ դրամավարկային քաղաքականության իրականացումը կդառնար անհնար, ինչը ՀՀ տնտեսությունը խոցելի կդարձներ արտաքին ցնցումների նկատմամբ:
2. Այս ռազմավարության կարևոր առավելությունը գնաճային սպասումների չեզոքացումն է, ինչը ՀՀ պարագայում նշանակալի խնդիր չէ:
3. Առկա չէ արդյունավետ ամրագրված արժույթ, և որպես այդպիսին չի կարող ծառայել ԱՄՆ դոլարը, քանի որ ՀՀ հիմնական տնտեսական գործընկերներն են Ռուսաստանը և

¹ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք (կատարված փոփոխություններով), 2006թ.:

² ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.3, կետ 1:

³ «ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում».
<https://www.cba.am/Storage/AM/downloads/DVQ/npatakadrum%20hajeren.pdf>:

Եվրոպական Միությունը, իսկ եթե դուրսն սկսի արժևորվել ռուբլու կամ եվրոյի նկատմամբ, ապա Հայաստանը կհայտնվի լուրջ տնտեսական դժվարությունների մեջ՝ չկարողանալով տալ համարժեք պատասխան:

4. Քանի որ դրամավարկային քաղաքականության մշակումն ու իրականացումը որոշվում է «անհնարին երրորդությամբ», որի համաձայն երկիրը կարող է ապահովել կապիտալի ազատ հոսքերից, գների և փոխարժեքի կայունությունից երկուսի համակցությունը միայն, ապա ՀՀ պարագայում ընտրությունը հանգում է գնաճ-փոխարժեք երկընտրանքին:

Այսպիսով, այնուհանդերձ դրամավարկային քաղաքականության զարգացման առումով միակ արդյունավետ լուծումը հանգում էր գնաճի նպատակադրման ռազմավարության անցմանը: Ստեղծված պայմաններում ՀՀ Կենտրոնական Բանկը հայտարարեց 2006 թ. հունվարի 1-ից գնաճի նպատակադրման անցումային ռեժիմ ընդունելու մասին, որի վերջնարդյունքը պետք է լինի անցումը գնաճի լիարժեք նպատակադրման քաղաքականությանը: Որպես դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք՝ սահմանվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ գնաճի ծրագրային մակարդակ՝ $4 \pm 1,5$ % միջակայքը:

Ընդհանրապես դրամավարկային քաղաքականության ռազմավարության մշակման և իրագործման համար հաշվարկվում են՝ գների մակարդակի, արտադրության իրական ծավալի, զբաղվածության մակարդակի և փողի քանակի միջև գոյություն ունեցող կապը: Վերջինիս վերլուծության նպատակով անհրաժեշտ է սահմանել փողի քանակի և տնտեսական այլ փոփոխականների միջև գոյություն ունեցող կապերը, որոնք արտահայտվում են փողի քանակական տեսության հավասարման միջոցով, որն ունի հետևյալ տեսքը¹.

$$M * V = P * T \quad (1)$$

որտեղ՝

M - ը՝ փողի քանակն է,

V - ն՝ փողի պտույտի արագությունը,

P - ն՝ գործարքի միավորի գինը,

T - ն՝ գործարքների թիվը որոշակի հատվածներում:

Այստեղ (P * T)-ն 1 տարվա ընթացքում շրջանառվող փողի քանակն է կամ բոլոր գործարքների գումարը դրամական արտահայտությամբ: M * V փողի այն քանակն է, որն օգտագործվել է գործարքների իրականացման ժամանակ: Քանի որ գործարքների T թիվը որոշելը դժվար է, ապա օգտագործվում է փողի քանակական հավասարումն այլ տեսքով²

$$M * V = P * Y \quad (2)$$

որտեղ՝

Y - ը՝ արտադրության ընդհանուր ծավալն է,

P * Y - ն՝ թողարկված արտադրանքի արժեքն է դրամական արտահայտությամբ:

Տնտեսության վրա փողի ազդեցության վերլուծության ժամանակ հաճախ պահանջվում է փողի քանակությունն արտահայտել այդ փողով ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների քանակության միջոցով: Դա արտահայտվում է M / P արտահայտությամբ, որն ստացել է փողի իրական պաշար անվանումը և չափում է փողի գնողունակությունը: Փողի պահանջարկի ֆունկցիան ներկայացված է մի հավասարումով, որը ժամանակի տվյալ պահին բացահայտում է փողի իրական պաշարի վերաբերյալ բնակչության որոշումների վրա ազդող գործոնները: Փողի պահանջարկի պարզ ֆունկցիան հետևյալն է³.

$$(M / P) = KY \quad (3)$$

որտեղ՝

K-ն հաստատուն է:


(3) բանաձևը ցույց է տալիս, որ, փողի պաշարի պահանջարկը ուղիղ համեմատական է եկամտին:

¹ Դուշյան Հ. Բ., Մակրոեկոնոմիկա (ուս. ձեռնարկ), Երևան, 2002թ., էջ 32:

² Նուն տեղում, էջ 34-35:

³ Նուն տեղում, էջ 36-37:

Վերլուծելով ՀՀ-ում փողի ագրեգատները 2009-2016թթ. , հարկ ենք համարում ընդգծել, որ շրջանառությունում կանխիկ դրամը գնալով ավելացել է, մասնավորապես 2011թ. 2009-ի համեմատ ավելացել է 23,22 տոկոսով, իսկ 2010թ. 2009 թվականի հետ համեմատած՝ 43,01 տոկոս, իսկ 2016 թվականի համեմատ 2009 թվականը՝ 34,49 տոկոս (տե՛ս գծապատկեր 1-ը):



Գծապատկեր 1. Փողի ագրեգատների համեմատական աճն ըստ 2009-2016թթ.¹

Միաժամանակ իրենց հերթին ցպահանջ ավանդները ՀՀ դրամով ի համեմատ արտարժույթով ավանդների ավելացել են ավելի փոքր ծավալներով: Օրինակ, ցպահանջ ավանդները ՀՀ դրամով 2011թ.-ին ի համեմատ 2009թ.-ի ավելացել են 45,82 տոկոսով, նույն ժամանակահատվածում արտարժույթով ավանդները՝ 44,93 տոկոսով, 2013թ.-ին 2009թ.-ի համեմատ ցպահանջն ավանդներն ավելացել են 83,76 տոկոսով, արտարժույթով ավանդները՝ 124,999 տոկոսով, 2016թ.-ին 2009թ.-ի նկատմամբ աճը կազմել է 132,91 տոկոս, իսկ արտարժույթով ավանդներինը՝ 248,70 տոկոս: Կարելի է ասել, որ 2009-2016թթ. արտարժույթով ավանդների աճը ցպահանջ ավանդների հետ համեմատած տեղի է ունեցել ի հաշիվ ՀՀ-ում դրլարայնացման բարձր մակարդակի: Վերջնական արդյունքում տնտեսությունը դառնում է ավելի խոցելի, իսկ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունն էլ նվազում է:

Փողի ագրեգատների (M1, M2, M2X) վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար, ըստ 2009-2016թթ. վիճակագրական տվյալների, ներկայացնենք հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ

Փողի ագրեգատների դինամիկան 2009-2016թթ.(մլն ՀՀ դրամ)²

Տարիները	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 ³	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2	Արտարժույթով ավանդներ	M2X ⁴
2009	248,520	93,186	341,706	67,412	409,119	294,913	704,031
2010	267,592	106,053	373,645	68,793	442,438	370,125	812,563
2011	306,226	135,883	442,109	116,585	558,694	427,403	986,097
2012	345,025	155,387	500,413	172,406	672,819	537,429	1,210,247
2013	355,407	171,239	526,647	221,900	748,547	663,532	1,412,079
2014	347,089	194,114	541,204	289,745	830,948	753,957	1,584,906
2015	319,835	186,354	506,189	289,769	795,958	906,394	1,702,351
2016	334,228	217,037	551,265	372,969	924,234	1,028,349	1,952,583

¹ Կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm կայքի տվյալների:

² https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm

³ M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


⁴ M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:

Աղյուսակի տվյալներից պետք է նկատել, որ ներկայացված փողի ագրեգատները 2016 թվականին 2009 թվականի համեմատ աճել են համապատասխանաբար՝ 1,61, 2,25, 2,77 անգամ: Վերջինիս (M2X) աճը կարելի է բացատրել նաև ՀՀ տնտեսության դոլարայնացման բարձր մակարդակի հետ:

Դրամավարկային քաղաքականության գործիքներից են նաև փոխարժեքային կուրսերը և գների աճի կառավարումը: Այսպես, ազգային արժույթի արժևորումը կամ արժեզրկումը խոսում է տվյալ երկրի տնտեսության մեջ տեղի ունեցող երևույթների մասին: Սակայն, տնտեսության կացության ցուցիչներից մեկի համաձայն տվյալ երկրի մոնետար իշխանությունները (կենտրոնական բանկերը) իրենց միջամտությամբ կարող են խթանել ազգային արժույթի արժեզրկումը կամ արժևորումը՝ կախված նրանից, թե տվյալ պահին տնտեսական ո՞ր խնդիրն է առավել կարևոր՝ գնաճի զսպումը, թե՞ տնտեսական աճին խթանելը, դոլարայնացման սահմանափակումը, թե՞ արտահանման խրախուսումը:

Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններն իրենց ազդեցությունն են թողնում փոխարժեքների վրա: Այսպես, օրինակ, ո՛չ աշխարհի ամենահզոր տնտեսություն և միջազգայնորեն փոխարկելի արժույթներ ունեցող ԱՄՆ-ը, ո՛չ Եվրամիությունը, ո՛չ Չինաստանը կամ Ճապոնիան, ո՛չ նավթային հարուստ պաշարներ ունեցող Ռուսաստանը կամ Սաուդյան Արաբիան, ո՛չ էլ առավել ևս նման ավելի փոքր երկրների տնտեսությունները չեն կարող գերծ մնալ փոխարժեքային տատանումներից կամ ցնցումներից:

Մյուս կողմից, փոխարժեքի տատանումն այն երևույթներից է, որը, բացի տնտեսության վրա ազդելուց և տնտեսության կացությունը բնութագրելուց, անմիջապես և առավել զգայուն ազդեցություն է ունենում բնակչության թե՛ վարքագծի ու սպասումների, թե՛ եկամուտների ու ծախսերի, թե՛ սոցիալական կացության վրա: Այս առումով հետաքրքրական է, թե ինչպես է փոփոխվել մեր ազգային արժույթը վերջին 5 տարիներին:



Գծապատկեր 2. Մեկ ԱՄՆ դոլարի դիմաց հայկական դրամի միջին փոխարժեքի ցուցանիշն՝ ըստ 2011-2015թթ.¹

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, չհաշված 2014թ.-ի դեկտեմբերին արձանագրված կտրուկ տատանումը, հայկական դրամը բավականին սահուն և անցնցում վարքագիծ է դրսևորել:

Ինչ վերաբերում է 2015 թվականին, ապա դրամի արժեզրկումը 1 տարվա կտրվածքով 5 տոկոսից էլ ցածր է եղել:

Դրամի փոխարժեքին առնչվող մյուս գործոնը գնաճն է, որի հանդեպ բնակչությունն առավել զգայուն է և առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերում: Շատերը արդեն հասկանում են, որ ազգային արժույթի արժեզրկումը բերում է գնաճի, և դա այս գործընթացի ամենա-

¹ <http://www.edrc.am/hy>


բացասական հետևանքն են համարում: Հատկապես բարձրանում են ներմուծվող ապրանքների գները, սակայն, քչերն են տեղյակ, որ գնաճն ու ազգային արժույթի արժեզրկումը նույն չափով չեն լինում: Այսպես, 2015թ. դեկտեմբերին արձանագրված 12-ամսյա գնաճի ցուցանիշը ոչ միայն դրա ապացույցն է, այլև այն բանի հանգամանքը, որ դրամի արժեզրկման պարագայում գնանկում էլ է հնարավոր:

Օրինակ, եթե 2015թ.-ի դեկտեմբերին 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ հայկական դրամը արժեզրկվել է մոտ 5 տոկոսով, ապա նույն՝ 2015թ.-ի դեկտեմբերին 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ գնաճի ցուցանիշը բացասական է եղել, այսինքն՝ արձանագրվել է գնանկում՝ 0,1 տոկոսով: Ընդ որում, պարենային ապրանքների գները 2015թ.-ի դեկտեմբերին 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ նվազել են 4,1 տոկոսով, ոչ պարենային ապրանքներինը աճել է 3,4 տոկոսով, իսկ ծառայությունների սակագները՝ 3,2 տոկոսով:

Հարց է ծագում. ինչպիսի՞ն կլինի դրամի վարքագիծը կամ գնաճը 2016 թվականին: Կանխատեսում անելն այս պահին գործնականում անհնար է, քանի որ դրանց վրա ազդում են բազմաթիվ ներքին և արտաքին գործոններ: Միջազգային բարդ իրավիճակները և դրա տնտեսական հետևանքներն ամբողջ աշխարհում բնականաբար իրենց ազդեցությունը կարող են թողնել նաև Հայաստանի տնտեսության, այդ թվում նաև ազգային արժույթի փոխարժեքի և գների մակարդակի վրա: Սակայն, 2015թ.-ին նմանատիպ լարվածության պայմաններում մեզ հաջողվեց խուսափել դրամի փոխարժեքի կամ գնաճի ցնցումներից: Հետևաբար, 2016թ.-ին նույնպես թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ ՀՀ կենտրոնական բանկը պետք է լուրջ ջանքեր ներդնեն արտերկրից եկող տնտեսական սպառնալիքների ազդեցությունը մեր երկրի տնտեսության վրա նվազագույնի հասցնելու համար:

Կատարված հետազոտությունները վկայում են, որ 2000-2003 թթ. չնայած դրամ/դոլար փոխարժեքը դրսևորել է անկանոն վարքագիծ, սակայն հիմնական միտումը եղել է դեպի արժեզրկում: Դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ իր պիկը գրանցեց 2003թ. մարտի 17-ին՝ 591,76 դրամ, իսկ ամենացածր արժեքը՝ 2008թ. օգոստոսի 4-ին՝ 300,73 (տե՛ս գծապատկեր 3-ը):

2000թ. ՀՀ արժույթային քաղաքականության հիմնական խնդիրներն էին ազատ լողացող փոխարժեքի քաղաքականության սկզբունքների և դրամավարկային քաղաքականության ծրագրային մակարդակների ապահովումը. դրամն այդ տարի միջինը արժեզրկվեց 0,83%-ով: 2001 թ. փոխարժեքի միջին տարեկան արժեզրկումը կազմեց 2,9%:



Գծապատկեր 3. Փոխարժեքային կուրսը ՀՀ-ում՝ ըստ 1993-2016թթ.

2003թ. մարտին, ըստ ՀՀ ԿԲ-ի տվյալների, դրամ/դոլար փոխարժեքը հասավ պիկին՝ 591.76 դրամ 1 դոլարի դիմաց: 2004-2007 թթ. դրամի արժևորումը պայմանավորված էր արտաքին առևտրաշրջանառության, ներգնա և արտագնա զբոսաշրջության, մասնավոր տրանսֆերտների և ներդրումների զգալի աճով: 2006 թ. հունվարի 1-ից ՀՀ ԿԲ-ն անցավ գնաճի նպատակադրման քաղաքականության, իսկ 2007թ. օրենսդրորեն ամրագրվեց, որ ԿԲ-ը ոչ թե սահմանում, այլ հրապարակում է արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Տնտեսական

բարենպաստ պայմաններում 2007թ. դեկտեմբերին՝ 2003թ. դեկտեմբերի համեմատ, դրամը դոլարի նկատմամբ արժևորվեց 46,2%-ով:

2008թ.-ի վերջերին տեղի ունեցած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի ճնշումներ առաջացրեց Հայաստանի արտարժույթային շուկայում որի արդյունքում 2009թ.-ի մարտի 3-ին ՀՀ ԿԲ-ը ստիպված վերադարձավ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, և դրամը արժեզրկվեց 21,7%-ով:

2011 թվականին 2008 թվականի համեմատ դրամն արժեզրկվել է և այդ նույն տարվա դեկտեմբերին միջին փոխարժեքը կազմել է 383,22: 2012-2013 թթ.դրամը հիմնականում արժեզրկման միտումներ է ցուցաբերել՝ ամսական 0,1-2,6%-ի սահմաններում: Իրավիճակը փոխվեց 2014թ. դեկտեմբերին և արդյունքում միջազգային տնտեսական փոփոխությունները՝ նավթի գների անկումը, դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու արժեզրկման, Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցներով պայմանավորված դրամը դոլարի նկատմամբ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվեց 10,3%-ով՝ հասնելով 490 դրամի:

2015թ. հիմնականում շարունակվեց դրամի արժեզրկումը, և մարտին դրամ/դոլար փոխարժեքը կազմեց միջինը 478,39՝ նախորդ տարվա նույն ամսվա 414,31-ի փոխարեն: Մյուս ամիսներին հիմնականում դիտվում էր կայուն իրավիճակ: 2016թ. հունվար-փետրվար ամիսները միջազգային տնտեսության համար ոչ բարենպաստ էին: Փետրվարին դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվեց ևս 3%-ով, և միջին փոխարժեքը կազմեց 493,6 դրամ՝ նախորդ ամսվա 486 դրամի փոխարեն:

Հետևաբար, ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրակացնել, որ Հայաստանում դրամավարկային քաղաքականության հետագա զարգացումը շարունակական գործընթաց պետք է լինի: Այն հատկապես պետք է ուղղված լինի գնաճի նպատակադրման ռազմավարությանն առնչվող հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների ազդեցության մակարդակի կրճատմանը: Վերջինիս իրականացումը շատ դեպքերում դուրս է ՀՀ ԿԲ-ի լիազորությունների շրջանակից, ինչը նշանակում է, որ գնաճի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է նաև պետական այլ մարմինների գործունե մասնակցությունն այդ գործընթացին:

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՇԱԿ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Դրամավարկային քաղաքականության հետագա զարգացումը շարունակական գործընթաց է: Այն հատկապես պետք է ուղղված լինի գնաճի նպատակադրման ռազմավարությանն առնչվող հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների ազդեցության մակարդակի կրճատմանը: Վերջինիս իրականացումը շատ դեպքերում դուրս է ԿԲ լիազորությունների շրջանակից, ինչը նշանակում է, որ գնաճի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է նաև պետական այլ մարմինների գործունե մասնակցությունն այդ գործընթացին:

Բանալի բառեր. սոցիալական համակարգ, վճարային հաշվեկշիռ, փոխարժեք, դրամավարկային քաղաքականություն, ֆինանսական հոսքեր, իրական հատված, տնտեսական աճ:

ДЕНЕЖНО-КРЕДИТНАЯ ПОЛИТИКА РА И АНАЛИЗ ПОВЕДЕНИЯ ОБМЕННОГО КУРСА

АРШАК АШОТОВИЧ БАЯДЯН

соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Дальнейшее развитие денежно-кредитной политики является непрерывным процессом, который должен быть направлен на решение проблем, особенно касающихся стратегии таргетирования инфляции, а также снижения степени влияния немонетарных факторов на инфляцию. Реализация последнего во многих случаях выходит за рамки полномочий Центрального банка, что означает, для эффективного управления инфляцией необходимо также активное участие других государственных органов в этом процессе.

Ключевые слова: социальная система, платежный баланс, обменный курс, денежно-кредитная политика, финансовые потоки, реальный сектор, экономический рост.

THE ANALYSIS OF THE MONETARY POLICY AND EXCHANGE BEHAVIOR IN THE REPUBLIC OF ARMENIA

ARSHAK ASHOT BAYADYAN

Ph.D. student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The development of the monetary policy is an ongoing process. In particular, this development needs to be aimed at addressing the issues related with the inflation targeting strategy, as well as reducing the impact of non-monetary factors on inflation. The implementation of the latter in many cases goes beyond the powers of the Central Bank, which means that effective management of inflation also requires active participation of other governmental bodies in this process.

Keywords: Social system, balance of payment, exchange rate, monetary policy, financial flows, real economy, economic growth